ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՄՆԱՃՅՈՒՂ

Ուսանողական գիտական ընկերության 2017-18 ուստարվա գործունեության

Հաշվետվություն

ԵՊՀ ԻՄ-ի Ուսանողական գիտական ընկերությունը հաշվետու ժամանակաշրջանում իրականացրել է թվով 42 գիտական, կրթական, մշակութային ծրագրեր և միջոցառումներ, մասնավորապես՝ գիտաժողով, ինտելեկտուալ խաղեր, գիտական և գիտահանրամատչելի զեկուցումներ և սեմինարներ, կինոդիտումներ, ճանաչողական այցեր, ցուցահանդես և այլն։ ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ հիմանդրման 15-ամյակին նվիրված գիտաժողովին մասնաճյուղի 3 ֆակուլտներից մասնակցեցին 15 ուսանողներ։։ ՈՒԳԸ 5 անդամներ գիտական զեկուցումներ են ներկայացրել մասնաճյուղում կայացած «1918թ. Մայիսյան հերոսամարտերը և Հայաստանի առաջին հանրապետության արարման գործընթացը» խորագրով հանրապետական գիտաժողովում։ 2018 թվականի ապրիլի 7-ին կազմակերպվել է Մայրության և գեղեցկության տոնին նվիրված ցուցահանդես, ուրում ներկայացված են եղել Կիրառական արվեստի ֆակուլտետի 13 ուսանողների շուրջ 20 աշխատանքներ։ ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ 22 անդամներ մասնակցել են Թանգարաների միջազգային օրվա միջոցառումներին՝ այցելելով Գաֆեսճյան արվեստի կենտրոն, Ռուսական արվեստի թանգարան, Հայաստանի պատմության թանգարան և Ազգային պատկերասրահ։ Յուրաքանչյուր կիսամյակում անցկացվել է ինտելեկտուալ խաղի մասնաճյուղային մեկական առաջնություն, ինչպես նաև կազմակերպվել է տնտեսագիտական տերմիններով ինտելեկտուալ 2 խաղ, որը դարձել է ավանդույթ Տնտեսագիտության ֆակուլտետում և կկրի շարունակական բնույթ։